ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2014 թվականի օգոստոսի 13-ի
N 496 գրությունը ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի
օգոստոսի 21-ի N 07/80-2/12545-14 և օգոստոսի 20-ի N 03/3-3/12443-14 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ է.


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մարտի 14-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
կողմից իրականացվող «Սուրբ «Տրդատ» Բաց Խորանի տարածքի բարեկարգում» ծրագրի
մասին» N Մ-190-Ա որոշման (2014 թվականի հունվարի 27-ի N Մ-608-Ա որոշման խմբա-
գրությամբ) 1-ին կետում և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում
«29,510,849» թիվը փոխարինել «56,098,849» թվով:

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝
ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն
որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի
նշանակություն՝

«Բազալտ» արտադրական կոդաբերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 03511821) 2014 թվականի
օգոստոսի 6-ին կնքված N 04Գ/014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում
է բազալտե սալիկների ձեռքբերում՝ 26,588,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի
հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ - 878 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1272-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2014 թվականի օգոստոսի 13-ի
թիվ 499 գրությունը, որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Արշիլ Գորկու
թանգարանին կից մետաղական ճաղաշարի, դարպասների և դռնակների տեղադրում»
ծրագրի մասին» N Մ-1272-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «01 ապրիլի
2014թ.» բառերը փոխարինել «30 սեպտեմբերի 2014թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 879 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 16-Ի N Մ-254-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ**

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2014 թվականի օգոստոսի 13-ի N 497 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 21-ի N 07/80-2/12549-14 ու N 03/3-3/12453-14 եզրակացությունները, որոշում է.


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի « Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Բերդ քաղաքի եկեղեցու շինարարական աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-450-Ա որոշման 1-ին կետում և 2-րդ կետի 2-րդ ենթակետում «429,189,340» թիվը փոխարինել «429,155,120» թվով, որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «429,189,340» թիվը փոխարինել «429,155,120» թվով,

2) 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «18 ապրիլի 2014թ.» բառերը փոխարինել «30 սեպտեմբերի 2014թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԵԳԱՀ



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 880 - Ա
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-490-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Երևան իմ սեր» հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2014 թվականի սեպտեմբերի 10-ի N 07/80-2/14066-14 և սեպտեմբերի 9-ի N 06/3-3/13941-14
եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան 24, ՀՎՀՀ՝ 00100778) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Ար. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» N Մ-490-Ա որոշմամբ (2013 թվականի ապրիլի 23-ի N Մ-253-Ա և 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-622-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2014 թվականի սեպտեմբերի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պորտլանդցեմենտի մատակարարում՝ 3,033,333.33 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՐԿ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ - 881 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՄԻԱՎ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 3-ի N 07/80-2/13483-14 և սեպտեմբերի 2-ի N 06/3-3/13381-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 1-ի N 02/6492-14 և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 3-ի N 03/07-1/10194-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**


1. Բարեգործական որակել Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող՝ 45,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագիրը (կցվում է):

2. Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՍՏԱՏՎԱԾ Ի՝

Հայկական Կարմիր խաչի ընկերության
Գլխավոր քարտուղար՝ Աննա Եղիազարյանի կողմից

«26» օգոստոսի 2014թ.

ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում
ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրի նպատակը	ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում ծրագիրը նպատակ ունի բարձրացնել երիտասարդների իրազեկվածությունը ՄԻԱՎ/ԶԻԱՀ հիվանդության, փոխանցման ուղիների, ախտորոշման և բուժման վերաբերյալ, ինչը կնպաստի սեփական առողջության նկատմամբ պատասխանատվության բարձրացմանը և սեռական ճիշտ վարքագծի ձևավորմանը:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով
3. Բարեգործը	Ամերիկյան Կարմիր խաչ
4. Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Երևան, Վանաձոր և Գյումրի քաղաքներ, հանրային առողջապահության բնագավառ
6. Ծրագրի բյուջեն	45.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ

2

7. Բարեգործություն ստացողը	15-23 տարեկան երիտասարդներ
8. Ծրագրի իրականացման տևողությունը	2014 Հուլիս 1-ից – 2015 Հունիս 30
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագիրն ունի հետևյալ ակնկալվող արդյունքները՝ 1. ՄԻԱՎ/ԶԻԱՀ վերաբերյալ տեղեկատվության տարածում և 15-23 տարեկան երիտասարդների և երիտասարդ զույգերի շրջանում իրազեկվածության բարձրացում 2. ՄԻԱՎ-ի կանխարգելման ոլորտում ՀԿԽԸ կարողությունների ամրապնդում Ծրագրի շրջանակներում ակնկալվող արդյունքներին հասնելու համար նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝ <u>Ակնկալվող արդյունք 1</u> 1.1 Կրթական դասընթացների իրականացում 15-23 տարիքային խմբի թվով 200 կամավորների համար, որոնք հավասարը հավասարին սկզբունքով կրթական հանդիպումներ են կազմակերպելու իրենց հասակակիցների շրջանում, ժամանակահատված՝ 2014թ. հոկտեմբերի 1-ից – 2014թ. նոյեմբերի 30-ը: Ընդհանուր արժողությունը՝ 11500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:



1.2 Հավասարը հավասարին սկզբունքով կրթական իրականացում 15-23 տարիքային խմբի բնակչության խմբերի ընդհանուր ժամանակահատվածը՝ 2014թ. դեկտեմբերի 1-ից 2015 թ. մայիսի 31-ը:

Ընդհանուր արժողությունը՝ 4200 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

1.3 Կրթական դասընթացների իրականացում երիտասարդ ընտանիքների շրջանում՝ մինչև 140 հոգի, ժամանակահատվածը՝ 2014թ. նոյեմբերի 1-ից 2014թ. նոյեմբերի 30-ը, 2015թ. ապրիլ 1-ից 2015թ. ապրիլի 30-ը:

Ընդհանուր արժողությունը՝ 3400 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

1.4 Կրթական դասընթացների իրականացում դասախոսների շրջանում՝ մինչև 40 հոգի, ժամանակահատվածը՝ 2014թ. հոկտեմբերի 1-ից 2014թ. հոկտեմբերի 31-ը, 2015թ. մարտ 1-ից 2015թ. մարտի 31-ը:

Ընդհանուր արժողությունը՝ 2280 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

1.5 Խորհրդատվությունների իրականացում Երևանի, Գյումրու և Վանաձորի խորհրդատվական կենտրոններում, ժամանակահատվածը՝ 2014թ. հուլիս 1-ից - 2015թ. հունիսի 30-ը :

Ընդհանուր արժողությունը՝ 1200 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

1.6 Հանրային միջոցառումների կազմակերպում, թվով երկու, նվիրված ԶԻԱՀ-ի համաշխարհային և ԶԻԱՀ-ից մահացածների հիշատակի օրերին, համապատասխանաբար՝ 2014թ. դեկտեմբերի 1-ը, և 2015թ. մայիսի 3-րդ կիրակին:

Ընդհանուր արժողությունը՝ 2020 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ :

20.10/2



Ակնկալվող արդյունք 2

2.1 Դասընթացների կազմակերպում և իրականացում ՀԿԽԸ աշխատակիցների և կամավորների համար ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում ժամանակահատվածը՝ 2014թ. հոկտեմբեր 1-ից 2015թ. ապրիլի 30-ը:

Ընդհանուր արժողությունը՝ 6000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

2.2 Ծրագրի շրջանակներում մշակված նյութերի և ձեռք բերված փորձի տարածում գործընկերների շրջանում, ծրագրի ընթացքում ակտիվ կամավորների հետ հանդիպումների, ծրագրի վերաբերյալ ընթացիկ քննարկումների կազմակերպում, կամավորների խրախուսում, ժամանակահատվածը՝ 2014թ. սեպտեմբերի 1-ից 2015թ. մայիսի 31-ը:


Ընդհանուր արժողությունը՝ 9100 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը

20.10/2

Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները հիմնականում կրթական, իրազեկման և խորհրդատվական են, ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել և պատրաստել կրթական և իրազեկման նյութ՝ 900 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, հանդիպումների և կրթական միջոցառումների ընթացքում մասնակիցների սննդի ապահովումը և գրենական պիտույքների ընդհանուր արժողությունը 7600 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ է, ծրագրի կառավարման և իրականացման վերաբերյալ ակտիվ կամավորների և աշխատակազմի համար ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում ուսուցողական դասընթացների համար նախատեսված գործուղման ծախսերի ընդհանուր արժողությունը 5100 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ է, նախատեսվում է նաև ակտիվ կամավորների համար խրախուսական նվերների ձեռք բերում՝ 500 ԱՄՆ

		դուլարին համարժեք դրամ արժեքով և պահպանականների ծեռք բերված թվով 12000 հատ, 480 ԱՄՆ դուլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական և պահպանման ծախսերը, նախատեսված 2014թ. հուլիսի 1-ից 2015թ. հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածի համար, վաճառվում են 5300 ԱՄՆ դուլարին համարժեք ՀՀ դրամ: Դրանք ներառում են ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ ծախսերը, կապի և կոմունալ ծախսերը:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը իրականացվում է կրթական հաստատությունների հետ անմիջական համագործակցությամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել ամսական, եռամսյակային և ավարտական հաշվետվություններ Ամերիկյան Կարմիր խաչին, ինչպես նաև կատարվելու են մոնիթորինգային այցեր նվիրատուների կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է իրականացվող գործողությունների անմիջական վերահսկում: Ներկայացվելու են հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համաձայնագրովին ըստ սահմանված կարգի:



11.10/2



ԼՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 882 - Ա
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 3 -ի N 07/80-2/8487-14 և հուլիսի 16-ի N 06/3-2/9496-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Կանադայի Հայոց թեմի միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ կահույք, գորգեր և լուսամփոփներ (մեկ տեղ, 783 կգ ընդհանուր քաշով, 17,770 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,383.77 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռները նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հայեցակարգերի գրասենյակի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 883 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի օգոստոսի 1-ի N 07/15/4140-14, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 5-ի N 07/80-2/11335-14 և օգոստոսի 6-ի N 06/5-1/11378-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի օգոստոսի 2-ի N ԱՄ/22.2/7978-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի Վալանս քաղաքից Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի քաղաքապետարանի հասցեով ստացված բժշկական սարքավորումների ու պարագաների (185 տեղ, 3,422 կգ ընդհանուր քաշով, 1,414 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2795 եվրո, «Գուգարքի» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բերն անհատույց հանձնվելու է Իջևանի բժշկական կենտրոնին:

2. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի քաղաքապետարանին՝ նշված բերի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 884 -Ա
քաղ. երևան**

**«Ա.Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
(ԵՐՖԻ)» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 26-ի N 07/80-2/12809-14 և օգոստոսի 21-ի N 03/3-3/12520-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի օգոստոսի 23-ի N 02/6154-14, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2014 թվականի օգոստոսի 27-ի N1/02.3/8027-14 ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության օգոստոսի 23-ի N01/07.1/9632-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 125,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագիրը (կցվում է):


2. «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.


2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-

ման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ա. Բ. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա
(ԵրՖԻ) հիմնադրամի» տնօրեն Աշոտ Չիլիկզարյանի կողմից

«15» օգոստոսի, 2014թ

«Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը»

Ծ Ր Ա Գ Ի Ր

10/3

1.	Ծրագրի նպատակը	Աջակցել -Հայաստանի Հանրապետության գիտական համակարգի, գիտա-տեխնիկական զարգացմանն ու արդիականացմանը, -միջազգային գիտական համակարգի հետ ՀՀ գիտական հանրության ինտեգրման գործընթացին, -մտավոր ներուժի արտահոսքի կանխման գործընթացին, -ՀՀ գիտական համակարգը երիտասարդ կադրերով համալրման գործընթացին, -միջազգային չափորոշիչներին համապատասխանող գիտական հետազոտությունների իրականացմանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի իրականացման համար նախատեսվում է օրենքով սահմանված կարգով ԱԱՀ-ից ազատել ՀՀ ներսում գնվող ապրանքները և ծառայությունները, արտերկրից գնվող ապրանքների ներմուծման ժամանակ օգտվել մաքսային տարբեր վճարումների արտոնություններից
3.	Բարեգործը	«Ամերիկայի հայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցություն (AESA)» 417 W. Arden Ave., Suite 112C, Glendale, CA 91203 USA, Tel: (818) 547-3372
4.	Ծրագրի կատարողը	Ծրագիրը իրականացնում է «Ա. Բ. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամը (ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փ. 2, ՀՎՀՀ՝ 01202364)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության, ք.Երևան, Ալիխանյան եղբայրների փողոցում գտնվող թիվ 2 մասնաշենքում, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզի տարածքում գտնվող «Նոր-

		Ամերիկ» և «Արագած» բարձրադիր գիտական կայաններում: Գիտության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 125.000.000 (հարյուր քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Տիեզերական ճառագայթների Բաժանմունքի երիտասարդ գիտականներն ու բարձրադիր գիտական կայանների կենսագործունեությունն ապահովող անձնակազմը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2014թ Սեպտեմբերի 1-ից, մինչև 2017թ. Սեպտեմբերի 1-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Գումարների բաշխվածությունը հետևյալն է՝ - անհատական ֆինանսական օժանդակություն և աջակցություն (պարգևատրումների տեսքով) բաժանմունքի 20(քսան) երիտասարդ գիտաշխատողներին՝ 35,000,000 դրամ (2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ. սեպտեմբերի 1-ը), ու բարձրադիր գիտական կայանների կենսագործունեությունն ապահովող և սպասարկող 15(տասնհինգ) հոգուց բաղկացած անձնակազմին՝ 10,000,000 դրամ (2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ. սեպտեմբերի 1-ը). -Ամենամյա գիտաժողովների և բարձր էներգիայի աստղաֆիզիկայի ամառային դպրոցների անցկացում «Բարձր էներգիաների ֆիզիկա և աստղաֆիզիկայի գիտափորձեր ու մեթոդներ» (TEPA) թեմայով: Գիտաժողովների շրջանակներում նախատեսվում են կազմակերպական, տարածքի վարձակալման, տրանսպորտային, սննդի կազմակերպման ծախսեր՝ 10,000,000 դրամ, որից 01.09.14թ.-01.09.15թ. - 3,200,000 դրամ, 01.09.15թ.-01.09.16թ. - 3,300,000 դրամ, 01.09.16թ.-01.09.17թ. - 3,500,000 դրամ - գիտական գործուղումներ - 9,120,000 դրամ (2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ. սեպտեմբերի 1-ը) -հրատարակչական ծախսեր: Բաժանորդագրություններ, գիտաժողովների կրթություն, գիտական հոդվածների, ժողովածուների և մենագրությունների հրատարակում և



10/3


		հրատարակված նյութերի առաքում՝ - 8,000,000 դրամ (2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ. սեպտեմբերի 1-ը) դրամ, - Գիտափորձարարական սարքերի արդիականացման ու կատարելագործման համար նոր սարքավորումների ներմուծում արտերկրից՝ սերվերներ, ցանցային սարքավորումներ, միջուկային էլեկտրոնիկական սարքեր, օսցիլյոգրաֆներ, մետերոլոգիական կայաններ, կայծակների սենսորներ, արագ գործողության ֆոտոտեխնիկա (25 մկն դր, կատարման ժամկետ՝ 2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ. սեպտեմբերի 1-ը) և այլ օժանդակ նյութերի ձեռքբերում Հայաստանի Հանրապետության ներսում (5 մկն դր, 2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ. սեպտեմբերի 1-ը): - Գիտական կայաններում երիտասարդ գիտնականների և անձնակազմի կենցաղային պայմանների բարելավման նպատակով իրականացվող աշխատանքների ծառայությունների (սեկյակների, աշխատատեղերի, ջրամատակարարման և ջեռուցման համակարգերի վերանորոգում) և գոյատևման ծախսերի համար ապրանքների (անհրաժեշտ նյութերի, կահույքի, սարքավորումների, սննդի, վառելիքաքաղցրահամի, նյութերի) ձեռքբերում (20.000.000 դրամ, ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվելու Հայաստանի Հանրապետության ներսում, 2014թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2017թ. սեպտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում):
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Գիտաժողովների շրջանակներում նախատեսվում են հատուկ սարքավորումների (լազերային պրոյեկտորներ և այլն) ձեռք բերում, կազմակերպական, տրանսպորտային, սննդի կազմակերպման ծախսեր՝ 10,000,000 դրամ. 2. Հրատարակչական ծախսեր: Բաժանորդագրություններ, գիտաժողովների նյութերի, գիտական հոդվածների, ժողովածուների, մենագրությունների


10/3

		հրատարակում և հրատարակված նյութերի առաքում՝ - 8,000,000 դրամ. 3. Գիտափորձարարական սարքերի արդիականացման ու կատարելագործման համար նոր սարքավորումների ներմուծում արտերկրից՝ սերվերներ, ցանցային սարքավորումներ, միջուկային էլեկտրոնիկական սարքեր, օսցիլյոգրաֆներ, մետերոլոգիական կայաններ, կայծակների սենսորներ, արագ գործողության ֆոտոտեխնիկա (25 մկն դր) և այլ օժանդակ նյութերի ձեռքբերում Հայաստանի Հանրապետության ներսում (5 մկն դր). 4. Գիտական կայաններում երիտասարդ գիտնականների և անձնակազմի կենցաղային պայմանների բարելավման նպատակով իրականացվող աշխատանքների ծառայությունների (սեկյակների, աշխատատեղերի, ջրամատակարարման և ջեռուցման համակարգերի վերանորոգում) և գոյատևման ծախսերի համար ապրանքների (անհրաժեշտ նյութերի, կահույքի, սարքավորումների, սննդի, վառելիքաքաղցրահամի, նյութերի) ձեռքբերում՝ 20.000.000 դրամ:
11.	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ամսական	Օրագրի հաշվապահի աշխատավարձ՝ ամսական 80.000 դրամ, ընդամենը 3 տարվա համար՝ 2. 880. 000 դր
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Օրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է սերտ համագործակցություն 22 Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, 22 գիտության և կրթության նախարարության գիտության պետական կոմիտեի, 22 Արտակարգ իրավիճակների նախարարության և Հայփոլիտմետ ծառայության, «Գերմանական էլեկտրոնային սինքրոտրոնի» (DESY-Համբուրգ), Կադառուհեյի Տեխնոլոգիական ինստիտուտի (KIT), Մաքս Պլանկի անվ. Ֆիզիկայի ինստիտուտի (MPI - Մյունխեն), ամերիկյան Ստենֆորդի համալսարանի (STANFORD UNIVERSITY) հետ:
13.	Օրագրի արդյունավետության նկատմամբ	Օրագրի իրականացման արդյունավետությունը,

1013

վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	հիմնականում, վերահսկվելու է դոնոր կազմակերպության կողմից՝ ներկայացվող ընթացիկ հաշվետվությունների հիման վրա: Մինչև ժամանակ սահմանված կարգով համապատասխան հաշվետվություններ են ներկայացվելու 22 կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:
---	--





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 885 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 13 -ի N 07/80-2/11913-14 և N 06/3-3/12046-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» N Մ-928-Ա (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԳԻԴԷՊԻՆՎԵՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02518022) 2014 թվականի փետրվարի 14-ին կնքված պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այգեհովիտ-Վազաշեն համայնքների երկրորդ աստիճանի ոռոգման նոր համակարգերի կառուցման նախագծային աշխատանքների իրականացում՝ 2,670,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության:

ՆԱԽԱՐԱՐ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 886 - Ա
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N Մ-473-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Երևանի N1 տուն ինտերնատ» ՊՈԱԿ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 11-ի N 07/80-2/11730-14 և N 06/3-3/11784-14, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2014 թվականի օգոստոսի 11-ի N 01/14.1/3961-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է:**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի N 1 տուն ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի N1 տուն ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Երևանի N 1 տուն ինտերնատ» ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքի կառուցում» N Մ-473-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


1) «Լարաբաղյան-Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01002751) 2014 թվականի հուլիսի 22-ին կնքված՝ N ԲԸԱՇՁԲ-14/16-Թ19 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 380,021,506 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մոմիկ» արտադրական կոոպերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 09206179) 2014 թվականի հուլիսի 30-ին կնքված՝ N ՊԸԾՁԲ 14/16-Թ20 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքների տեխնիկա-

կան հսկողության ծառայությունների մատուցում՝ 4,905,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Մանանա-1» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00036296) 2014 թվականի հուլիսի 30-ին կնքված՝ N ԲԸԱՇՁԲ-14/16-Թ21 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում՝ 2,293,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության:


ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ-ՋՋԴԱ
քաղ. երևան

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ-
ՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԳԻ ԼԵՈՆԱԳՅՈՒԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ
ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ, ՋՐԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2014 թվականի օգոստոսի 11-ի N 07/80-2/11729-14 և օգոստոսի 5-ի
N 06/5-1/11295-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության
2014 թվականի օգոստոսի 7-ի N 02/5704-14, Հայաստանի Հանրապետության տարածքային
կառավարման նախարարության 2014 թվականի օգոստոսի 11-ի N 07/16/4304-14 և
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի օգոստոսի 6-ի N 02.1/
3745-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական
կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 5514397)
կողմից իրականացվող՝ 2,611,417 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրա-
պետության Շիրակի մարզի Լեոնապյուղի համայնքի խմելու ջրի ջրագծի կառուցում, ջրա-
վազանների ցանկապատում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատա-
կով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից
կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականաց-
ման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արխտեխ-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536243) 2014 թվականի հուլիսի 29-ին կնքված՝
N 161/MWS-14/L/14/07/03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լեոնապյուղի համայնքում խմելու ջրի
ջրագծի կառուցման և ջրավազանների ցանկապատման աշխատանքների իրականացում՝
2,611,417 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրա-
գրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապե-
տության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներ-
կայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաս-
տանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի
Հանրապետության Շիրակի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



Handwritten signature


ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայկական Կարիտաս» բարեգործական հասարակական կազմակերպության
Գործադիր Տնօրեն Գագիկ Տարապյանի կողմից
«31» հուլիսի 2014թ.


Շիրակի մարզի Լեռնագյուղ համայնքի խմելու ջրի ջրագծի կառուցում
ջրավազանների ցանկապատում
ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Իրականացնել խմելու ջրագծի կառուցում. d 50 մմ խողովակաշարի 700 մ հատվածի մոնտաժում d 20 մմ խողովակաշարի 50 մ հատվածի մոնտաժում
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ստանալ Ավելացված Արժեքի Հարկից ազատման արտոնություն
3	Բարեգործը	Իտալական Կարիտաս բարեգործական կազմակերպություն Via Aurelia 796, 00165 Roma, Italia
4	Ծրագիրը կատարողը	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ Գյումրի, Հ.Սարգսյան 3 նրբ., տուն 8 ՀՎՀՀ 05514397
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Շիրակի մարզի Լեռնագյուղ գյուղ բնագավառը՝ ջրամատակարարում
6	Ծրագրի քյուլեն	2.611.417 դրամ առանց ԱԱՀ-ի
7	Բարեգործություն ստացողը	Շիրակի մարզի Լեռնագյուղ համայնքի բնակիչները
8	Ծրագրի իրականացման տևողությունը	3 ամիս, օգոստոս 15- նոյեմբեր 15, 2014 թ.
9	Սիջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրով նախատեսված է 700 գ/մ d=50 մմ-նոց խողովակաշարի մոնտաժում, 50 գծ/մ d=20 մմ-նոց խողովակաշարի մոնտաժում: Ծրագրի շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը կազմում է 2.611.417 դրամ առանց ԱԱՀ-ի: Ծրագիրն իրականացվելու է 2014թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին:

10/6



10	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք բերվեն 500 գ/մ d=50 մմ-նոց և 50 մ d=20 մմ-նոց սինթետիկ խողովակներ, կոզտագործվի շինտեխնիկա, մասնագիտական ու բանվորական աշխատանք: Ձեռք բերվող ապրանքների, ինչպես նաև ծառայությունների գինը կազմում է 2.611.417 դրամ առանց ԱԱՀ-ի: Ծառայությունները կմատուցվեն կապալառու «Արխտես-շին» ՍՊԸ կողմից:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	1. Ավտոմեքենայի վառելանյութ և շահագործում 15 000 դր 2. Գրասենյակային պարագաների գնում 15 000 դր 3. Փոստային և հանրային կապեր 10 000 դր Ընդամենը կազմակերպչական՝ 40 000 դր
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի մասին պաշտոնական մամակով կտեղեկացվի Լոռու մարզպետարանին: Անմիջական համագործակցություն կիրականացվի տեղական համայնքապետարանի, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացնի «Հայկական Կարիտաս» ԲՀԿ Վարչական Խորհուրդը: Մարզպետարանն ու համայնքապետարանն ազատ են ընտրել ու կիրառել վերահսկողության իրենց մեխանիզմները: Ծրագրի ավարտին հաշվետվություն կներկայացվի Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովին:



Handwritten signature

10/6



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ-888-Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒԻ
ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԶՐԱՀԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱ-
ԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2014 թվականի օգոստոսի 11-ի N 07/80-2/11765-14 և օգոստոսի 8-ի
N 06/3-3/11660-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության
2014 թվականի օգոստոսի 11-ի N 02/5767-14, Հայաստանի Հանրապետության տարածքային
կառավարման նախարարության 2014 թվականի օգոստոսի 11-ի N 07/15/4279-14, և
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2014 թվականի օգոստոսի 7-ի N 101/
104.3/3909-14 եզրակացությունները, **որոշում է.**

1. Բարեգործական որակելի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական
կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 5514397)
կողմից իրականացվող՝ 2,590,090 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապե-
տության Լոռու մարզի Կաթնաղբյուր գյուղի ճանապարհների ջրահեռացման համակարգի
կառուցման աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատա-
կով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից
կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականաց-
ման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արխտեխ-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536243) 2014 թվականի հուլիսի 29-ին կնքված՝
N 160/MWS-14/K/14/07/02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաղբյուր գյուղի ջրահեռացման համա-
կարգի կառուցման աշխատանքների իրականացում՝ 2,590,090 դրամի չափով՝ առանց
ավելացված արժեքի հարկի:

3. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրա-
գրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապե-

տության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներ-
կայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաս-
տանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն ու Հայաստանի
Հանրապետության Լոռու մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է



«Հայկական Կարիտաս» բարեգործական հասարակական կազմակերպության
Գործադիր Տնօրեն Գագիկ Տարապյանի կողմից
«31» հուլիսի 2014 թ.

Լոռու մարզի Կաթնաղբյուր գյուղի ճանապարհների ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ
Ծրագիր


1	Ծրագրի նպատակը	Իրականացնել ջրահեռացման համակարգի կառուցում. d 500 մմ կիսախողովակաշարի 500 մ հատվածի մոնտաժում
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ստանալ Ավելացված Արժեքի Հարկից ազատման արտոնություն
3	Բարեգործը	Իտալական Կարիտաս բարեգործական կազմակերպություն Via Aurelia 796 00165 Roma Italia
4	Ծրագիրը կատարողը	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ Գյումրի, Հ.Սարգսյան 3 նրբ., տուն 8 ՀՎՀՀ 05514397
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Լոռու մարզի Կաթնաղբյուր գյուղ, բնագավառը՝ ջրահեռացում
6	Ծրագրի քույշեն	2.590.090 դրամ առանց ԱԱՀ-ի
7	Բարեգործություն ստացողը	Լոռու մարզի Կաթնաղբյուր գյուղի բնակիչները
8	Ծրագրի իրականացման տևողությունը	3 ամիս, օգոստոս 15- նոյեմբեր 15, 2014 թ.
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրով նախատեսված է 500 գ/մ d=500 մմ-նոց կիսախողովակաշարերի մոնտաժում : Ծրագրի շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը կազմում է 2.590.090 դրամ առանց ԱԱՀ-ի: Ծրագիրն իրականացվելու է 2014թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին:
10	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայու- թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք կբերվեն 500 գ/մ d=500 մմ-նոց ա/ց խողովակներ, կօգտագործվի շինտեխնիկա, մասնագիտական ու բանվորական աշխատանք: Ձեռք բերվող ապրանքների, ինչպես նաև ծառայությունների գինը

10/7

		կազմում է 2.590.090 դրամ առանց ԱԱՀ-ի: Ծառայությունները կմատուցվեն կապալառու «Արխտեխ-շին» ՍՊԸ կողմից:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	1. Ավտոմեքենայի վառելանյութ և շահագործում 15 000 դր 2. Գրասենյակային պարագաների գնում 15 000 դր 3. Փոստային և հանրային կապեր 10 000 դր Ընդամենը կազմակերպչական՝ 40 000 դր
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի մասին պաշտոնական նամակով կտեղեկացվի Լոռու մարզպետարանին: Անմիջական համագործակցություն կիրականացվի տեղական համայնքապետարանի, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացնի «Հայկական Կարիտաս» ԲՀԿ Վարչական Խորհուրդը: Սարգսյանից համայնքապետարանն ազատ են ընտրել ու կիրառել վերահսկողության իրենց մեխանիզմները: Ծրագրի ավարտին հաշվետվություն կներկայացվի Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողով:



10/2



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- Ճ Ճ 9 -Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N Մ-502-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայկական Կարիտաս» բարեսիրական
հասարակական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 3-ի N 07/80-2/13494-14 և սեպտեմբերի 4-ի
N 06/3-3/13563, եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակեր-
պության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն
անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգոր-
ծական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 6-ի «Հայկական
Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող
«Պատուհան դեպի աշխարհ» ծրագրի մասին» N Մ-502-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Անտենոր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02703694) 2014 թվականի օգոստոսի 28-ին կնքված
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է թղթապանակների տպագրում՝
60,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ
12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 890 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N Մ-585-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒՇՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական
կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսնե-
րի նախարարության 2014 թվականի օգոստոսի 22-ի N 07/80-2/12598-14 և սեպտեմբերի 1-ի
N 03/3-2/13253-14 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազ-
մակերպության կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմա-
կերպության հասցեով Ավստրիայից ստացված ստորև նշված բեռները ներմուծվում են
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական
հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն
ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի
մասին» N Մ-585-Ա որոշմամբ (2012 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1264-Ա որոշման
խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում.


1) շինանյութ՝ ջերմամեկուսիչ փրփրապլաստ (1,028 տեղ, 14,500 կգ ընդհանուր
քաշով, 22,311 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են
6,129 եվրո, ՄՃՓ ՏՄ).

2) շինանյութ՝ ջերմամեկուսիչ փրփրապլաստ (1,072 տեղ, 3,524.8 կգ ընդհանուր
քաշով, 6,529.92 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել
են 12,121 եվրո, ՄՃՓ ՏՄ).

3) շինանյութ՝ ջերմամեկուսիչ փրփրապլաստ (1,168 տեղ, 2,803.2 կգ ընդհանուր
քաշով, 5,326.08 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել
են 11,900 եվրո, ՄՃՓ ՏՄ).

4) ջեռուցման համակարգի պլաստմասե խողովակներ (12,244 տեղ, 7,060 կգ
ընդհանուր քաշով, 174,627.41 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման
ծախսերը կազմել են 6,350 եվրո, ՄՃՓ ՏՄ):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 891 -Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան
մասնաճյուղ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2014 թվականի օգոստոսի 8-ի N 07/80-2/11556-14 և օգոստոսի 13-ի
N 06/5-1/11979-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության
2014 թվականի օգոստոսի 12-ի N ԱՄ/22.2/8337-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ Մ Ա Մ Է.**

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից
ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մաս-
նաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (1 տեղ, 1,9 կգ ընդհանուր քաշով, 784
եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 89,98 եվրո,
«Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի
«Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի
կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման
ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին»
N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 892 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻ


(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան
մասնաճյուղ) (1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2014 թվականի օգոստոսի 21-ի N 07/80-2/12527-14 և սեպտեմբերի
1-ի N 45FO-FFEE-02D2, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախա-
րարության 2014 թվականի օգոստոսի 21-ի N ԱՄ/22.2/8636-14 եզրակացությունները,
ո Ր Ո Շ Մ Է.


1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից
ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մաս-
նաճյուղի հասցեով Միացյալ Թագավորությունից ստացված բեռը (մարդկային շիճուկ՝ մեկ
տեղ, 0.1 կգ ընդհանուր քաշով, 10 ֆունտ ստերլինգին համարժեք դրամ արժեքով,
փոխադրման ծախսերը կազմել են 45 ֆունտ ստերլինգ, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծվում է
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց
սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող
«Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի
ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ
հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 893 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

**(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան
մասնաճյուղ) (2)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2014 թվականի օգոստոսի 21-ի N 07/80-2/12528-14 և օգոստոսի
27-ի N 03/3-2/12908-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախա-
րարության 2014 թվականի օգոստոսի 21-ի N ԱՄ/22.2/8635-14 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ է.*

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից
ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մաս-
նաճյուղի հասցեով Բելգիայից ստացված բեռը (դեղորայք՝ TMC207 100 մգ, 2 արկղ, 1.8 կգ
ընդհանուր քաշով, 784 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը
կազմել են 151.94 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013
թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության
հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն
տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրա-
պետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակ-
ներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 894-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«ՀՀ-ում տուբերկույոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և
դեղակայուն տուբերկույոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային
ծրագիր)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 1-ի N 07/80-2/13284-14 և
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունը կիրականացվի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի և Վարդենիսի Տարածքային Ջարգացման Ծրագրի գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Ֆրանսիայի աջակցող գրասենյակի կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային ատուի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական Ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարտիսյան / Ռ. Մայր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ - 921 - Ա

քաղ. երևան

«ԵՐԵՎԱՆԻ ՈՒՏԱՐԻ ԱՎՈՒՄԲ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 16 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ
ԽՈՀԱՆՈՑԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՄԻՋԱՆՑՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 9-ի N 07/80-2/13977-14 և N 06/3-3/13946-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 10-ի N 02/6773-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 8-ի N ՖԲ/ԱՆԱ-4/7181-14 ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի սեպտեմբերի 5-ի N 01/08.2/3104-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Երևանի ռոտարի ակումբ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 8,425,527 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի թիվ 16 մանկապարտեզի խոհանոցի և հարակից միջանցքի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Երևանի ռոտարի ակումբ» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 02547001) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շինտեխսերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02230494) 2014 թվականի օգոստոսի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման

աշխատանքների իրականացում՝ 8,425,527 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Երևանի ռոտարի ակումբ» հասարակական կազմակերպությանը՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Էջմիածին քաղաքի թիվ 16 մանկապարտեզի խոհանոցի և հարակից միջանցքի վերանորոգում»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի թիվ 16 մանկապարտեզի խոհանոցի և հարակից միջանցքի վերանորոգման աշխատանքների իրականացում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	«Երևանի ոռոտարի ակումբ» հասարակական կազմակերպություն, Երևան, Մոսկովյան 31, ՀՎՀՀ՝ 02547001
4.	Ծրագիրն կատարողը	«Երևանի ոռոտարի ակումբ» հասարակական կազմակերպություն, Երևան, Մոսկովյան 31, ՀՎՀՀ՝ 02547001
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, քաղաք Էջմիածին, սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 8,425,527 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, քաղաք Էջմիածին, թիվ 16 մանկապարտեզ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2014 թվականի օգոստոսի 28-ից մինչև հոկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ	“Շինտեխսերվիս ” ՍՊԸ -ի հետ կնքվել է պայմանագիր աշխատանքների իրականացման վերաբերյալ, առանձին միջոցառումներ նախատեսված չեն:

	Ֆինանսական միջոցների ծավալը	Պայմանագրի արժեքն է 8,425,527 դրամ: Աշխատանքները կավարտվեն սույն թվականի հոկտեմբերի 31-ին:
10.	Ձեռք բերվող(ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	“Շինտեխսերվիս ” ՍՊԸ -ի հետ կնքվել է պայմանագիր աշխատանքների իրականացման վերաբերյալ, առանձին միջոցառումներ նախատեսված չեն: Պայմանագրի արժեքն է 8,425,527 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն է նախատեսվում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ Արմավիրի մարզպետարանի հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Սահմանված կարգով կվերահսկվի աշխատություն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ծրագրի ընթացքի և վերջնական իրականացման վերաբերյալ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 922 - Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԳԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 11-ի N 07/80-2/14245-14 և սեպտեմբերի 10 -ի N 6/5-1/14178-14 ու Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 11-ի N 03/07-1/10695-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Գերմանիայում Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս Բրայան Ֆերանի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված գրքերը (22 տեղ, 475 կգ ընդհանուր քաշով, 10,000 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 8,004.40 ԱՄՆ-ի դոլար, ՄՓԵԼԱՍՓԱՄ մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 923 -Ա

քաղ. երևան

**«ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱ-
ԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՅԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 11-ի N 07/80-2/14308-14 և սեպտեմբերի 10-ի N 06/3-3/14179-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 5-ի N ԱՄ/22.2/9177-14 եզրակացու-թյունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով ձեռք բերված և իր հասցեով ստացված վերականգնողական թերապիայի համար նախատեսված սարքավորումների (2 տեղ, 350 կգ ընդհանուր քաշով, 7,048.68 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 1,365 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և անհատույց «Արաբկիր» բժշկական համալիրին հանձնելու ծրագիրը:

2. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն հանձնելու վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 924 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՆ-
ՆԱԿԱՔԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 11-ի N 07/80-2/14276-14 և սեպտեմբերի 10-ի N 6/3-2/14177-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված ստորև նշված ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում


1) «Dives Limited» ընկերությունից ձեռք բերված լոսատուներ՝ 5 տեղ, 57.55 կգ ընդհանուր քաշով, 6,267.50 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 73,836 դրամ, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն:

2) «NEC» ընկերությունից ձեռք բերված տեսաձայնային համակարգի ապրանքներ՝ 4 տեղ, 726.76 կգ ընդհանուր քաշով, 87,379 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1,008,500 դրամ, ՄՃՓ մաքսատուն:

3) «ModulIT Solutions LTD» ընկերությունից ձեռք բերված տեսաձայնային համակարգի ապրանքներ՝ 1 տեղ, 5.50 կգ ընդհանուր քաշով, 923 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 170 ԱՄՆ-ի դոլար, ՄՓԵԱՍՓԱՄ մաքսատուն:

4) «Shuttle Inc» ընկերությունից ձեռք բերված տեսաձայնային համակարգի ապրանքներ՝ 4 տեղ, 35.60 կգ ընդհանուր քաշով, 13,975 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 313 ԱՄՆ-ի դոլար, ՄՓԵԱՍՓԱՄ մաքսատուն:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ - 925 - Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ
ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱՐԵՐՈՂ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 9-ի N 07/80-2/13978-14 և սեպտեմբեր 5-ի N 06/3-3/13644-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 01801249) հետ 2014 թվականի սեպտեմբերի 2-ին կնքված N 32 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պահարանների պատրաստում և տեղադրում՝ 750,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ - 926 - Ա
(քաղ. երևան)


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ - 774 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 27-ի N 07/80-2/12958-14 և N 03/3-2/12986-14 եզրակացությունները, որոշում է.


1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ձեռք բերված բեռը (325 տեղ, 11,387.4 կգ ընդհանուր քաշով, 76,758.78 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, որից 5,200 ԱՄՆ-ի դոլար կազմում են փոխադրման ծախսերը, Արարատյան S/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավեդիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա (2014 թվականի հունիսի 23-ի N Մ-563-Ա և 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-649-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ - 927 - Ա


(քաղ. Երևան)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ - 774 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (1)
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 27-ի N 07/80-2/12963-14 և N 03/3-2/12983-14 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ձեռք բերված բեռը (434 տեղ, 7,351 կգ ընդհանուր քաշով, 315,132.61 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, որից 5,434.77 ԱՄՆ-ի դոլար կազմում են փոխադրման ծախսերը, Արարատյան Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավեդիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա (2014 թվականի հունիսի 23-ի N Մ-563-Ա և 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-649-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ - 928 - Ա
(քաղ. երևան)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ- 774 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (2)
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 27-ի N 07/80-2/12965-14 և 28-ի N 03/3-2/13082-14 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ձեռք բերված բեռը (8 տեղ, 8,538 կգ ընդհանուր քաշով, 25,766.72 եվրո ընդհանուր արժողությամբ, որից 3,000 եվրո կազմում են փոխադրման ծախսերը, ՄՃՓ S/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավեդիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա (2014 թվականի հունիսի 23-ի N Մ-563-Ա և 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-649-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ - 929 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-774-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 28-ի N 07/80-2/13129-14 և N 03/3-3/13049-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա (2014 թվականի հունիսի 23-ի N Մ-563-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արդի Կարասի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239413) 2014 թվականի հուլիսի 29-ի N 055/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գույքի պատրաստում և մատակարարում՝ 30 936,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույլ որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ -930- Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 28-ի N 07/80-2/13083-14 և N 03/3-3/13048-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա, 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-346-Ա և 2014 թվականի հուլիսի 9-ի N Մ-654-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարեն-93» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01500165) 2014 թվականի հուլիսի 18-ին կնքված՝ N 05/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների կատարում՝ 3,773,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ - 931- Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (1)
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 28-ի N 07/80-2/13086-14 և N 03/3-3/13047-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա, 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-346-Ա և 2014 թվականի հուլիսի 9-ի N Մ-654-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վազեն Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00105041) 2014 թվականի մարտի 3-ին կնքված՝ N 016/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազաֆիկացման աշխատանքների կատարում՝ 775,706 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2014 թվականի N Մ- 932 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N Մ-615-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 26-ի N 07/80-2/12812-14 և օգոստոսի 13-ի N 06/5-1/11978-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին» N Մ-615-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետում «վրան և այլ» և «կանխարգելման ծրագրեր» բառերից հետո լրացնել «նախատեսվում են մաքսային ձևակերպումների իրականացման ծառայություններ» բառերով:

2. Սահմանել, որ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքը անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էդուարդ Իսախանյանի» անհատ ձեռնակատերի հետ (ՀՎՀՀ՝ 26506746) 2014 թվականի օգոստոսի 1-ին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ներմուծված բեռի մաքսային ձևակերպումների իրականացում՝ 260,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 933 -Ա

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի սեպտեմբերի 18-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Լեհաստանի պետական հրդեհային ծառայության կողմից Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հասցեով ստացված փրկարարական գույքը և սարքավորումները (140.37 կգ ընդհանուր քաշով, 45,217.59 լեհական զլոտի ընդհանուր արժողությամբ, «Զվարթնոց» մաքսատուն):

2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 սեպտեմբերի 2014 թվականի N Մ - 934 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՄԻՐԻԱՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 12-ի համաձայնեցման թերթը **ո Ր ո Շ ու մ է**:

1. Բարեգործական որակել Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող՝ 18,614,500 դրամ արժողությամբ «Միրիա հայ երեխաների կայուն զարգացումը Հայաստանում» ծրագիրը (կցվում է):

2. Հայկական կարմիր խաչի ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Երևանի մարզպետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սեյմի նախարարություն և Երևանի քաղաքապետին:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝


Հայկական կարմիր խաչի ընկերության
Գլխավոր քարտուղար՝ Աննա Եղիազարյանի կողմից
02.09.2014թ.

<< Միրիա հայ երեխաների կայուն զարգացումը Հայաստանում >>

Ծ Ր Ա Ղ Ի Ր

1. Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքը	Միրիա հայ երեխաների կայուն զարգացում և ինտեգրում Հայաստանում Կոնֆլիկտային իրավիճակներից տուժած սիրելի աղքատ երեխաների սոցիալ-հոգեբանական բարենկեցություն և կայուն զարգացում, հասարակության մեկուսացված խմբերի ինտեգրմանն ուղղված սոցիալ-մշակութային գործունեության իրականացում, ՀՀ-ում անձնակազմի ու կամավորների կարողությունների և հմտությունների բնօրինակ՝ կոնֆլիկտային իրավիճակներից տուժած երեխաների կարիքների ապահովման նպատակով ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
2. Ծրագրի բարենպաստող արդյունքը	Դանիական Կարմիր խաչի ընկերություն
3. Բարեգործի կազմակերպություն	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարտիան 21, ՀՎՀՀ 00006023
4. Ծրագրի կազմակերպություն	Քաղաք Երևան, հանրապետական ոլորտ
5. Ծրագրի իրականացման վայրը և բնակավայրը	18 614 500 ՀՀ դրամ
6. Ծրագրի բյուջեն	Երևանի հանրապետական դպրոցների թվով 324 տեղաբնակ (64) և սիրելի աղքատ (260) երեխաներ
7. Բարեգործություն տեսքով	01.08.2014թ. – 31.07.2015թ.
8. Ծրագրի իրականացման տևողությունը	

9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները նախատեսված են հետևյալ ուղղություններով՝ 1. Ծրագրի աշխատակազմի համար նախապատրաստական դասընթացի կազմակերպում 2. Ծրագրի կամավորների և ուսուցիչների համար եռօրյա դասընթացների կազմակերպում 3. Ծրագրի արդյունավետության ապահովման նպատակով դասընթացավարների վերապատրաստում /ծրագրի իրականացման երկրորդ փուլում/ 4. Հնարավոր դոնորների հետ հանդիպումների կազմակերպում 5. Դասընթացների համար կուրսերի մշակում և տպագրում՝ բռնության, սթրեսի կառավարման, կոնֆլիկտի լուծման, ընկերության հաստատման, հասարակության մեջ ինտեգրման և այլ թեմաներով 6. Շահառու երեխաների ծնողների և խնամակալների հետ հանդիպումների կազմակերպում՝ ծրագրի վերաբերյալ տեղեկություններ հաղորդելու ինչպես նաև երեխաներին հուզող հարցերի և խնդիրների շուրջ քննարկում ծավալելու նպատակով 7. Նախապես ընտրված դպրոցներում երեխաների համար 20 ուսուցում-վարժանքների կազմակերպում 8. Համայնքային միջոցառումներում /մաքրման աշխատանքներ, ծառատունկ, և այլն/ դպրոցահասակ երեխաների ընդգրկում 9. Շահառու երեխաների համար մշակութային միջոցառումների կազմակերպում 10. Առավել խոցելի երեխաների համար ամառային յոթօրյա վրանային ճամբարի կազմակերպում Ծրագրի շրջանակներում՝ ըստ ուղղությունների, նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝
--	--

	1. Ծրագրի աշխատակազմի համար նախատեսված նախապատրաստական դասընթացի կազմակերպում Ծրագրի ղեկավարի կողմից կանցկացվի մեկօրյա դասընթաց, որը հնարավորություն կընձեռի ծրագրի աշխատակազմին (դասընթացների համակարգողներ, ֆինանսական օգնական) հասկանալ իրենց պատասխանատվություններն ու առաջադրանքները, կներկայացվեն ծրագրի մանրամասները և նրանց կտրամադրվի գործունեության պլանը: Դասընթացի նպատակն է նաև հնարավորություն տալ աշխատակազմին բարելավել մոնիթորինգի, տվյալների հավաքագրման ու վերլուծության ունակությունները: Բյուջեն՝ 32 500 ՀՀ դրամ Ժամանակահատված՝ Սեպտեմբերի 7-15, 2014թ. 2. Ծրագրի կամավորների և ուսուցիչների համար եռօրյա դասընթացների կազմակերպում Ծրագրի շրջանակներում կիրականացվի <<Ուսուցանում և ծրագրի համակարգում>> թեմայով եռօրյա դասընթաց ծրագիրն իրականացնող 30 դասընթացավարների՝ ՀԿԽԸ երիտասարդ թվով 15 կամավորների և ընտրված դպրոցների 15 ուսուցիչների համար: Դասընթացի ընթացքում կամավորները և ուսուցիչները ձեռք կբերեն սիրիահայ և տեղաբնակ երեխաների համար ուսուցում-վարժանք իրականացնելու բոլոր անհրաժեշտ հմտությունները և գիտելիքները՝ երեխաների կայուն զարգացմանն ուղղված գործունեությունն իրականացնելու նպատակով: Բյուջեն՝ 2 056 000 ՀՀ դրամ Ժամանակահատված՝ Սեպտեմբերի 19-30, 2014թ.
---	---

3. Ծրագրի արդյունավետության ապահովման նպատակով դասընթացավարների վերապատրաստում /ծրագրի իրականացման երկրորդ փուլում/

Ծրագրի իրականացման երկրորդ փուլի սկզբին, ինչը համընկնում է ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի մեկնարկի հետ, դասընթացների համակարգողների կողմից կիրականացվի դասընթացավարների մեկօրյա վերապատրաստում, որի նպատակն է դասընթացավարների գիտելիքների թարմացումը՝ կապված երեխաների համար նախատեսված ուսուցում-վարժանքների հետ:

Բյուջեն՝ 400 000 ՀՀ դրամ

Ժամանակահատված՝ Փետրվարի 20-25, 2015թ.

4. Հնարավոր դոնորների հետ հանդիպումների կազմակերպում


Այս գործունեության նպատակն է տեղեկացնել մասնավոր հատվածի շահագրգիռ ՀԿԽՀ համագործակիցներին ծրագրի գործունեության մասին ինչպես նաև քննարկել լրացուցիչ ռեսուրսների հայթայթման և ծրագրի ընդլայնման հնարավորությունները:

Հանդիպումները նախատեսվում է անցկացնել կլոր սեղանի ձևաչափով ծրագրի ղեկավարի կողմից՝ 4 անգամ ողջ ծրագրի իրականացման ընթացքում:

Բյուջեն՝ 400000 ՀՀ դրամ

Ժամանակահատված՝ Մեպտեմբեր 20, 2014թ.- Հուլիս 31, 2015թ.

5. Կրթական նյութերի մշակման և տպագրման աշխատանքների կազմակերպում:



Կարմիր խաչի/Կարմիր մահիկի Միջազգային ֆեդերացիայի /ԿԽՄՖ/ կողմից տրամադրված համատասխան գրականությունը անգլերենից կթարգմանվի հայերեն և կտեղադրվի, ինչի հիման վրա կմշակվի ձեռնարկ սիրիահայ և տեղաբնակ երեխաների համար՝ նախատեսված ուսուցում-վարժանքների իրականացման համար: Յուրաքանչյուր դասընթացավար կունենա իր ձեռնարկը: Դասընթացավարներին կտարամադրվեն նաև նյութին առնչվող ՀՀ-ում կիրառում ունեցող տեղական և այլ միջազգային գրականություն:

Կտպագրվի՝

- Ձեռնարկ/մոդուլ երեխաների կայուն զարգացման վերաբերյալ՝ դասընթացավարների համար

Բյուջեն՝ 1 700 000 ՀՀ դրամ

Ժամանակահատված՝ Մեպտեմբեր 10-30, 2014թ.

6. Երեխաների հոգեբանական խնդիրներին ծանոթացման և նրանց պաշտպանության ամրապնդման նպատակով ծնողների և խնամակալների հետ հանդիպումների կազմակերպում

Առկա ծրագրի համաձայն՝ ծնողների և խնամակալների համար կկազմակերպվեն մի շարք հանդիպումներ՝ երեխաների հոգեբանական խնդիրներին ծանոթացման նպատակով: Այս հանդիպումները նպատակաուղղված են օգնելու ծնողներին հասկանալ իրենց երեխաների խնդիրները և բարելավել հաղորդակցումը նրանց հետ: Երևանի հանրակրթական դպրոցներում շահառու երեխաների ծնողների համար երեք տեսակի հանդիպումներ կկազմակերպվեն, որոնց ընթացքում նրանք մի շարք հարցաթերթիկներ և գնահատման թղթեր կլրացնեն՝ ծրագրից ստացված արդյունքները գնահատելու և երեխաների ու նրանց խնդիրների վերաբերյալ հավաստի տեղեկություն ձեռք բերելու նպատակով: Առաջարկվող երեք հանդիպումներն են՝ ա) նախապատրաստական (կազմակերպվում է նախքան

ուսուցում-վարժանքների մեկնարկը), բ) երեխաների սոցիալ-հոգեբանական բարօրության, հույզերի, ինչպես նաև երեխաների իրավունքների և պատասխանատվությունների թեմայով (կազմակերպվում է 5-րդ ուսուցում-վարժանքից հետո) և գ) վտանգից երեխաների պաշտպանությունը թեմայով /կազմակերպվում է վերջին ուսուցում-վարժանքից առաջ/

Բյուջեն՝ 147 000 ՀՀ դրամ

Ժամանակահատված՝ Սեպտեմբերի 25, 2014թ. - Մայիս 20, 2015թ.

7. Նախապես ընտրված դպրոցներում երեխաների համար 20 ուսուցում-վարժանքների կազմակերպում

Ուսուցում-վարժանքներն իրականացվում են դպրոցներում դասերից հետո շաբաթու երեխաների համար: Դպրոցների ընտրությունը կկատարվի ծրագրի իրականացման առաջին փուլում: Ուսուցիչների հետ խորհրդակցելուց հետո կընտրվեն սիրիահայ երեխաները՝ ելնելով մի շարք չափորոշիչներից, ինչպիսիք են, օրինակ, տարիքը, խոցելիության աստիճանը (սոցիալական և առողջական պայմաններ, կրթական առաջընթաց, և այլն): Չափորոշիչները կմշակվեն ծրագրի հոգեբանի կողմից: Տեղաբնակ երեխաները կընտրվեն ուսուցիչների կողմից տրամադրված բնութագրերի հիման վրա: Ելնելով մայիս ամսին ՀԿՄԸ կողմից իրականացված նախնական գնահատումից՝ ծրագիրը կիրականացվի Երևանի կենտրոնին մոտ գտնվող 5 - 7 դպրոցներում, որտեղ սովորում են մոտ 450 սիրիահայ երեխաներ: Կկազմվի 10-16 տարեկան 18 երեխայից ոչ ավել բաղկացած 18 խումբ, ովքեր կհավաքագրվեն դպրոցների տարբեր դասարաններից: Յուրաքանչյուր խումբ դպրոցական տարվա ընթացքում շաբաթական մեկ օր կմասնակցի 90 րոպե տևողությամբ ուսուցում-վարժանքի: Ծրագրի փաթեթը ներառում է 20 ուսուցում-վարժանք՝ 1-5 ներածական ուսուցում-վարժանք 6-14 թեմատիկ ուսուցում-վարժանք կոնֆլիկտային իրավիճակներից տուժած երեխաների խնդիրների վերաբերյալ 15-19 թեմատիկ ուսուցում-վարժանք ԿՄ Շարժման, մարդկային արժեքների և բարեգործության, Հայոց պատմության, մշակույթի և ավանդույթների

վերաբերյալ և այլն:

20-րդ անիտիկ ուսուցում-վարժանք:

Ուսուցում-վարժանքները անցկացվում են հայերեն լեզվով՝ նախապես մշակված խաղերի միջոցով՝ երեխաների և դասընթացավարների միջև վստահություն ստեղծելով:

Բյուջեն՝ 4 386 600 ՀՀ դրամ

Ժամանակահատված՝ Հոկտեմբերի 1, 2014թ. - Դեկտեմբերի 19, 2014թ. և Մարտի 1, 2015թ.- Մայիսի 19, 2015թ.

8. Համայնքային միջոցառումներում դպրոցահասակ երեխաների ընդգրկում

Բոլոր շահառու դպրոցահասակ երեխաները կընդգրկվեն առնվազն մեկ համայնքային միջոցառման մեջ, ինչպես, օրինակ, մաքրությունը, ծառատունկը: Լրացուցիչ ռեսուրսների հայթայթման նպատակով նախատեսվում է նաև համագործակցություն տեղական իշխանությունների հետ: Ընդհանուր առմամբ կիրականացվի 9 համայնքային միջոցառում:

Բյուջեն՝ 907 200 ՀՀ դրամ

Ժամանակահատված՝ Հոկտեմբերի 20, 2014թ.- Հուլիսի 31, 2015թ.

9. Շահառու երեխաների համար մշակութային միջոցառումների կազմակերպում

Ազգային մշակույթի տարրերին և պատմությանը երեխաներին ծանոթացնելու նպատակով կկազմակերպվեն 9 էքսկուրսիաներ դեպի Հայաստանի տեսարժան վայրեր, որոնք կողեկցվեն մշակութային միջոցառումներով՝ ժողովրդական երաժշտություն, պար, խաղեր: Այս միջոցառումները կարևոր մաս են կազմում երեխաների կայուն զարգացման գործընթացում, քանի որ շահառու երեխաները ներկայացնում են սփյուռքը, իսկ հայրենասիրական ոգով

դաստիարակությունն ու հայրենիքի պատմական հուշարձանները կարևոր արժեք են ներկայացնում սփյուռքահայ ընտանիքներում:
Մշակութային միջոցառումները նպաստակառուցված են խորացնելու այս գիտելիքը և հնարավորություն են ընձեռում երեխաներին ծանոթանալ Հայաստանի պատմական վայրերին: Ցուրաքանչյուր խումբ կմասնակցի առնվազն մեկ մշակութային միջոցառման:

Բյուջեն՝ 907 200 ՀՀ դրամ

Ժամանակահատված՝ Հոկտեմբերի 21, 2014թ. - Հուլիսի 31, 2015թ.

10. Առավել խոցելի երեխաների համար ամառային յոթօրյա վրանային ճամբարի կազմակերպում

Ստեփանավան քաղաքին հարող դաշտավայրում առավել խոցելի 40 շահառու երեխաների համար ամառնը կազմակերպվելու է վրանային ճամբար, որի ընթացքում կիրականացվի կրթական դասընթացներ և ինտեգրամանն ուղղված տարբեր միջոցառումներ: Գրքային աշխատանքներն իրականացվելու են ծրագրում ընդգրկված ՀԿՖԸ երիտասարդ կամավորների և ուսուցիչների ակտիվ մասնակցությամբ: Հատուկ մշակված ծրագիրը նպաստակառուցված է լինելու բնության զրկում և անկաշկանդ մթնոլորտում հավելյալ միջոցառումների և հոգեբանի աշխատանքի միջոցով նպաստելու առավել խոցելի երեխաների հոգեբանական խնդիրների լուծմանը և ինտեգրմանը մեր հասարակության մեջ:


Բյուջեն՝ 4 700 000 ՀՀ դրամ

Ժամանակահատված՝ Հուլիս 1-31, 2015թ.

10. Զեռք բերվող (ներմուծվող) ապրանքների,

Կիրառելի չի

Ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական և պահպանման ծախսեր 2,978,000 ՀՀ դրամ, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի, կոմունալ և այլ ծախսեր:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների	Դպրոցներում դասընթացները կազմակերպվելու են ՀԿՖԸ և ԿԳՆ միջև 2009թ. կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում: Դպրոցների ընտրության և դպրոցներում դասընթացները կազմակերպելու համար, ՀԿՖԸ սերտորեն համագործակցելու է քաղաքապետարանի կրթության բաժնի հետ՝ համաձայն սահմանված կարգի:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել ամսական և ավարտական հաշվետվություններ նվիրատուին՝ Դանիական Գարմիր խաչի ընկերությանը, որի տարածաշրջանային պատվիրակությունը իրականացնելու է պարբերաբար այցեր՝ ծրագրի մշտադիտարկման, վերահսկողության և գնահատման նպատակով: Հայկական Գարմիր խաչի ընկերության կողմից իրականացվելու է գործողությունների մշտադիտարկում վերահսկում և գնահատում, կազմակերպվելու են այցեր դպրոցներ և ամառային վրանային ճամբար: Նախատեսվում է հաշվետվություններ կայացնել նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 սեպտեմբերի 2014 թվականի N Մ - 935 - Ա
քաղ. երևան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի սեպտեմբերի 24-ի համաձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով ձեռքբերված և իր հասցեով ստացված դեղորայքի (3 տեղ, 58.97 կգ ընդհանուր քաշով, 1,485.74 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 665 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը անհատույց հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Աշան համայնքի բուժկետին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԿԱՆ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 936 - Ա
քաղ. երևան
(որոշումն ընդունվել է 2014 թվականի սեպտեմբերի 12-ին)

**«ՔՐՈՆԻՄԵՏ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱՂՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՄԱՐԶԱՄՐԱՀԻ ՏԱՆԻՔԻ
ՎԵՐԱՆՈՐԴՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 17-ի N 06/3-3/14521-14 և սեպտեմբերի 25-ի N 07/80-2/15375-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 18-ի N 01/6918-14 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 8,784,534 դրամ արժողությամբ «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության սեղանի թենիսի մարզասրահի տանիքի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«Ակտո-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03811085) 2014 թվականի օգոստոսի 1-ին կնքված N CCF-1-CT/2/2014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի Ազաթանգեղոս փողոցի 6 հասցեում գտնվող «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 8,784,534 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին՝ սմփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Քրոնիմետ բարեգործական հիմնադրամի

Տնօրեն՝

Աննա Մեղրակյան

15 սեպտեմբերի 2014թ.

«Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության սեղանի թենիսի մարզասրահի տանիքի վերանորոգում»

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է վերանորոգել «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության մոտ 740 քառ. մետր մակերեսով սեղանի թենիսի մարզասրահի տանիքը, որը շարքից դուրս է եկել:
2.	Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը	Օգտվել 22 հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ Երևան, Այգեստան 5-րդ փող., տուն 15 ՀՎՀՀ 02600555, հեռախոս՝ 55-43-05, 098 98-99-13
4.	Ծրագիրը կատարողը	«Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ Երևան, Այգեստան 5-րդ փող., տուն 15 ՀՎՀՀ 02600555, հեռախոս՝ 55-43-05, 098 98-99-13
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	«Հայաստան» մարզական հասարակական կազմակերպություն: Հասցեն՝ ք. Երևան, Ագաթանգեղոսի 6: Բնագավառը՝ սպորտ:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 8.784.534 (ութ միլիոն յոթ հարյուր ութսունչորս հազար հինգ հարյուր երեսունչորս) դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Անհրաժեշտ գումարները առկա են հիմնադրամի հաշվին: Ծրագրի իրականացման համար հատկացված ֆոնդերը նախատեսվում է ծախսել մինչև 2014թ. սեպտեմբերի 30-ը:
7.	Բարեգործությունն ստացողը	«Հայաստան» մարզական հասարակական կազմակերպություն: Հասցեն՝ ք. Երևան, Ագաթանգեղոսի 6:

2

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2014թ.-ի օգոստոսի 1-ից 2014թ. սեպտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրով նախատեսված է իրականացնել վերանորոգման աշխատանքներ 2014թ.-ի օգոստոսի 1-ից 2014թ. սեպտեմբերի 30-ը: Ընդհանուր բյուջեն կազմում է 8.784.534 դրամ: Ելութային մասի արժեքը ընդհանուրի մեջ կազմում է մոտ 5.000.000:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի վերանորոգման աշխատանքների իրականացման համար պայմանագիր է կնքվել «Ակոռչին» ՍՊԸ հետ, որի արժեքը կազմում է 8.784.534 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամը համագործակցում է 22 Սեղանի թենիսի ֆեդերացիայի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Շինարարական աշխատանքների վերահսկողությունը կիրականացվի «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Ծրագրի իրականացման հաշվետվություններ կներկայացվեն 22 կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:



(Signature)